

Մշակութային ժառանգություն

Ներկա իրավիճակը

Ամուլսարի ծրագրային տարածքում իրականացված դաշտային աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են 487 հավանական մշակութային ժառանգության վայրեր, հաստատված հնագիտական վայրեր կամ ժամանակակից մշակութային վայրեր:

Այդ վայրերը ներառում են հողային կամ քարե թմբեր, որոնք կարող են ներկայացնել տարբեր դարաշրջաններ, ընդհուպ մինչև Բրոնզե դարաշրջանը, ինչպես նաև քարերով նշագրված գերեզմանոցներ, որոնք թվագրվում են միջնադարով, ուշ միջնադարի հնարավոր բնակավայրեր, մինչ բրոնզե դարաշրջանի մարդկանց նախապատմական բնակավայրեր և գործունեության հետքեր, ինչպես նաև ժամանակակից վայրեր, որոնք ներառում են 20-րդ դարի հովիվների գյուղակներ:

Հնարավոր ազդեցություններն ու խնդիրները

- Արդյունահանման աշխատանքները կարող են վնասել կամ ոչնչացնել առկա հնագիտական նմուշները:
- Ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր ազդեցության կենթարկվեն 81 հնագիտական վայրեր, չնայած դրանցից ոչ մեկը, ըստ մշակութային ժառանգության տեղացի և միջազգային փորձագետների, հնագիտական առումով որևէ էական կարևորություն չի ներկայացնում:
- Շինարարության և շահագործման ընթացքում հնարավոր է նոր գտածոների հայտնաբերում:



Հնարավոր ազդեցությունների և խնդիրների լուծմանն ուղղված Լիդիանի քայլերը

- Հայտնի մշակութային վայրերը հնարավորինս բացառվում են աշխատանքային գոտուց:
- Ծրագրի ազդեցության տարածքում գտնվող վայրերի ճանաչողական և հնագիտական պեղումների միջոցով իրականացվող հնագիտական գնահատում, ինչպես նաև միջինից շատ մեծ կարևորություն ներկայացնող վայրերի արտափորում այն մասերում, որոնք հնարավոր չէ շրջանցել Ծրագրի նախագծով:
- Նախատեսվում է հնագիտական գտածոների հայտնաբերման համար սահմանված ընթացակարգի կիրառում:

Որ ազդեցություններն ու խնդիրներն են լինելու հարատև

- Ծրագրի իրականացմամբ պայմանավորված, մշակութային ժառանգության վայրերը ենթարկվելու են որոշակի ազդեցությունների:
- Վերոգրյալ միջոցառումների իրականացումն այնուամենայնիվ դրական ազդեցություն կունենա հայկական մշակութային ժառանգության վրա՝ նպաստելով Հայոց աշխարհի անցյալի գիտական և մշակութային կողմերի ավելի լավ ընկալմանը գիտական և մշակութային առումներով: